ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի 020-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է**.

1. Ազգային ժողովի խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի «Ազգային ժողովի ութերորդ գումարման բարեկամական խմբերի կազմերը հաստատելու մասին» ԱԺԽՈ-020-Ա որոշման.

1) 22-րդ հավելվածում (Հայաստան-Իրան բարեկամական խումբ) «Մարիա Կարապետյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերը փոխարինել «Դավիթ Դանիելյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերով,

2) 36-րդ հավելվածում (Հայաստան-Ղազախստան բարեկամական խումբ) «Վլադիմիր Վարդանյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերը փոխարինել «Նարեկ Բաբայան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերով,

3) 63-րդ հավելվածում (Հայաստան-Ֆինլանդիա, Նորվեգիա բարեկամական խումբ) «Անուշ Բեղլոյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերը փոխարինել «Վիլեն Գաբրիելյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերով:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

2023 թվական, հունիսի 12
Երևան
ԱԺԽՈ-040-Ա